III

ԶԵՅԹՈՒՆՑԻՆԵՐԻ 1895 Թ. ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ 100-ԱՄՅԱԿԸ

Պատմ. գիտ. դոկտոր Հ. Մ. ՊՈՂՈՍՅԱՆ

Կիլիկիայի հայկական թագավորության անկումից հետո դաշտային վայրերում ապրող հայ բնակիչների մեծ մասը սկսեց հեռանալ երկրից կամ բարձրանալ Տավրոսյան լեռները։ Նրանց մի մասը շարժվեց դեպի Ջահան (Պիռամոս) գետի լեռնահովիտը և հաստատվեց այնտեղ, իրենց նոր բնակավայրին տալով Զեյթուն անունը։ Գյուղաքաղաքի մոտ գտնվող Պիրիտ լեռը հարուստ էր երկաթով, որից բնակիչները պատրաստում էին գյուղատնտեսական գործիքներ, կենցաղային իրեր և զենքեր։ Նրանք միաժամանակ ծծմբի և ածուխի համապատասխան խառնուրդից վառոդ էին պատրաստում։

Այսպես Զեյթունի բնակիչները դարեր շարունակ ապրեցին կիսանկախ կյանքով, չնայած գտնվում էին օսմանյան պետության սահմաններում։ Մարաշի թուրք փաշաները բազմաթիվ անգամ ցանկացան իրենց ենթարկել Զեյթունը, սակայն նրանց այդ չհաջողվեց։

1862 թ. հերոսական ապստամբությունից երեք տարի հետո՝ 1865 թ. զեյթունցիները ստիպված եղան ընդունելու թուրքական առաջին կայմակամին և մնացած պաշտոնյաներին, որով էլ վերջացավ նրանց կիսանկախ վիճակը։ Բայց լեռնականների պայքարը թուրքական բռնակալության դեմ շարունակվեց նաև հետագա տարիներին։

1895 թ. Զեյթունում պետական պաշտոնյաների հարստահարությունները հասել էին անասելի չափերի և այդ հողի վրա սկսեց հասունանալ պոռթկում ընդդեմ թուրքական բռնության։ Բացի դրանից, զեյթունցիներին հայտնի դարձավ, որ սուլթան Աբդուլ Համիդի հրամանով պատրաստվում են հայերի մասսայական կոտորածներ նաև Զեյթունում։

1895 թ. օգոստոսի վերջերին Զեյթունում տեղի է ունենում ազգային ժողով, որը որոշում է գյուղաքաղաք փոխադրել շրջակա գյուղերի բնակիչներին և ապստամբել՝ դիմել ինքնապաշտպանական կռիվների։ Սկսվում է կռվի նախապատրաստվելու մի տենդագին շրջան։ Կուտակվում է վառոդ, արճիճ, և կայծքար[1]։ Շուտով թուրքական բանակը Մարաշից շարժվում է դեպի Զեյթուն և կանգ է առնում Ջահան գետի ափին, Բերդիս Զայի մոտ։ Լեռնականները որոշում են անցնել գետը և հարձակվել թուրքական զորքի վրա։ Նրանք այդպես էլ անում են։ Սակայն հաջողություն չեն ունենում և վերադառնում են Զեյթուն։ Ճանապարհին կտրում են հեռագրաթելերը և խզում են թուրքական զորանոցի և Մարաշի կապը։ Ապա պաշարում են թուրքական զորանոցը և ցանկանում են գրավել այստեղ եղած զինամթերքը։ Նրանք գրավում են 80 զինվորներով պաշտպանվող թուրքական կառավարչատունը։

Զորանոցի 600 զինվորներն ու սպաները անձնատուր չեն լինում։ Լեռնականները կտրում են գետի զորանոց եկող ջրատարը, ապա մի քանի օրից հետո նավթ են լցնում զորանոցի պարիսպներին և սկսում են այրել այն։ Եղած աղբյուրները հավաստում են, որ կառավարական զորքերի զինվորներն ու սպաները կատաղի դիմադրություն են ցույց տվել զինված լեռնականներին։

Զեյթունի բնակիչները որոշում են տեղական արհեստավորների միջոցով պատրաստել անիվների վրա դրված երկաթյա վանդակներ, որոնք կպաշտ-

1 Ս. Բյուրատ. Զեյթունի վրեժը. Կ. Պոլիս, 1911, էջ 234։

պանեին մարտիկներին գնդակներից, ապա շարժվել դեպի զորանոցի պարիսպները, անցք բաց անել նրանց վրա և ներխուժել զորանոց, սակայն այդ միջոցին դիմելու հարկ չեղավ, քանի որ Թուրքական կայազորը, իր հրամանատար Իֆֆետբեյի հրամանով, 600 զինվորներով և սպաներով անձնատուր է լինում։ Ապստամբների ձեռքն է անցնում երկու գերմանական հրանոթ, 170 ռումբ, 600 հրացան, 120000 փամփուշտ, 2 տակառ վառոդ, սննդամթերք, 6 ջորի, 3 ձի և մեկ դեղատուն[2]։ Զորանոցի վրա ծածանվեց ազգային դրոշը[3]։

Զորանոցի գրավման լուրը անմիջապես հայտնի է դառնում ողջ հայությանը, հասնում է Ռուսաստան, Եվրոպա և այլուր։ Սակայն Թուրքական իշխանությունները ամեն ինով աշխատում էին արտասահմանյան Թերթերում տպագրել հոդվածներ, որոնց մեջ խեղաթյուրվում էին Զեյթունում կատարված իրադարձությունները։ Այսպես, Կ. Պոլսից „National Zeitung" լրագրին ուղարկված մի հոդվածում ասվում է այն մասին, որ Թուրքական զորքերին հրամայված էր չկրակել հայերի վրա և այդ հեշտացրեց զորանոցի գրավումը։ Հոդվածում գրված է. «Պահապան զորքը 400 հոգուց էր կազմված։ Սակայն զինվորները հրացան չէին արձակում, թեև ձեռքի տակ 120 արկղ ունեին փամփուշտներով լի, որովհետև հրաման էին ստացել՝ հրաշունչ զենքեր չգործադրել»[4]։ Այնուհետև ասվում է այն մասին, որ հայերը մտան Թուրքերի տները և սկսեցին կողոպտել և նրանց կանանց ու երեխաներին կոտորել։ Ահավոր սուտ, քանի որ Զեյթունում առհասարակ Թուրք բնակիչներ չկային։

Զորանոցի գրավման օրվա մասին կան տարբեր կարծիքներ։ Ս. Բյուրատը նշում է, որ այն գրավվեց հոկտեմբերի 14-ին։ Տ. Գևորգյանը և Հ. Ահարոնյանը գտնում են, որ գրավվել է հոկտեմբերի 18-ին։ Գ. Գալուստյանի կարծիքով այն գրավվել է 17-ին։ Հայաստանի պետական արխիվում պահվող մի վավերագիր պարզում է հարցը։ Վավերագիրը գրված է 1895 Թ. հոկտեմբերի 27-ին, այն Զեյթունի հասարակության դիմումն է Մերսինի անգլիական հյուպատոսին, որը ժամանակին մենք հրապարակել ենք։ Այնտեղ ասված է, որ զորանոցը պաշարվել է հոկտեմբերի 16-ի առավոտյան և 60 ժամից հետո գրավվել է[5]։ Այս նշանակում է, որ զորանոցը գրավվել է հոկտեմբերի 18-ին, կեսօրից հետո։

Այդ նույն ժամանակ Թուրքական իշխանությունները իրականացրին Մարաշի հայերի կոտորածը, որին զոհ ընացին մեծ Թվով անմեղ բնակիչներ և հսկայական նյութական վնաս հասցվեց տեղի հայերին։ Այդ ջարդին մասնակցեց ոչ միայն գրգռված Թուրք խուժանը, այլև կառավարական զորքը։ Հրդեհվեց և ավերակների վերածվեց Ջերքեր Դերե հայկական Թաղը, որը կոչվում էր նաև «Քյուչուկ Զեյթուն»։ Ջարդի ականատեսներից մեկը Թուրքական բարբարոսների կատարած այդ ոճրի մասին գրում է. «Շատերը խողխողե-ին, ոմանց վիզը ետեեն կտրեցին, ուրիշները հրացանազարկ ընելով կրակի մեջ նետեցին, ոմանց ալ փախչելու պահուն գլուխը տապարով ջախջախեցին և հոր ինկավ, փայտ ճեղքելու պես շերտ-շերտ կտրեցին։ Թուրքերը ահա այսպես մեռուցին քրիստոնյաները, այսպես վարվեցան այդ անգութները»[6]։

Հալեպի ռուսական կոնսուլ Մ. Ի. Յակիմանսկու տվյալների համաձայն Մարաշի սանջակում քարուքանդ արվեց 75 գյուղ, այրվեց 2327 տուն և սպանվեցին 6630 քրիստոնյաներ։ 1895 Թ. հոկտեմբերի 13-ին Մարաշում սկսված ջարդը կրկնվեց հոկտեմբերի 15-ից մինչև 18-ը և շարունակվեց

---

2 Նույն տեղում, էջ 375։

3 Տ. Գևորգյան. Սանտոխ, Պատմություն Զեյթունի 1895-ի պատերազմների, Բ մաս, Փարիզ, 1946, էջ 28։

4 «Արձագանք», 1895, № 128։

5 «Բանբեր Հայաստանի արխիվների», 1963, № 3, էջ 76։

6 Զեյթունի պատմագիրք. Պուենոս Այրես, 1960, էջ 677։

մինչև նոյեմբերի 6-ը։ Սպանվեցին 823 հայեր, որից 447-ը կաթոլիկներ և բողոքականներ, քանդվեց 200 և թալանվեց 1543 տուն, 8000 հայեր մնացին անօթևան[7]։

Այս բոլոր իրադարձություններից հետո Մուստաֆա Ռեմզի փաշան՝ հունական տզգային ազատագրական շարժումները ճնշողներից մեկը, մեծ բանակով շարժվեց դեպի Զեյթուն և կանգ առավ Ջհան գետի ափին։ Այդ օրերին թուրքական իշխանավորների և կրոնավորների հայատյաց քաղաքականության և պրոպագանդայի շնորհիվ սկսվեցին թուրքական խուժանի հարձակումները հայկական գյուղերի վրա։ Այսպիսով գավառակի բնակիչները ստիպված էին կռվել և՛ կառավարական զորքերի, և՛ թուրք խուժանի դեմ։ Այդ հարձակումներից խուսափելու նպատակով Զեյթունի շրջակա գյուղերի բնակիչները ստիպված թողնում էին իրենց բնակավայրերը և ունեցած-չունեցածով տեղափոխվում էին Զեյթուն։ Նրանց հեռանալուց հետո թուրք ջարդարարները շատ կարճ ժամանակի ընթացքում ավերակների և մոխրակույտերի էին վերածում այդ վայրերը։

Նոյեմբերի 27-ին Ռեմզի փաշան Մարաշի հայերից մի պատվիրակություն է ուղարկում Զեյթուն և կառավարության անունից առաջարկում է կենքը վայր դնելու դեպքում ներում շնորհել նրանց, պայմանով, որ նրանք հանձնեն ապստամբության ղեկավարներին, զորանոցի մեջ հաստատեն թուրք զինվորներին, վերադարձնեն գրաված զենքերը և հրանոթները։ Չհավատալով նրանց, լեռնականները մերժում են այդ առաջարկները։

Այսպիսով, այդ օրերին մեծ թվով հայ բնակիչներ կուտակվեցին Զեյթուն գյուղաքաղաքում և Ֆոնուզ գյուղում։ Թուրքական բանակի ուժերը Ռեմզի փաշայի գլխավորությամբ շարժվեցին դեպի Զեյթուն, իսկ Ալի բեյի ուժերը՝ դեպի Ֆոնուզ։ Երեք օր է տևել Ֆոնուզի պաշտպանությունը։ Շուտով պաշտպանների մոտ սկսում է սպառվել զինամթերքը։ Նրանք ճեղքում են պաշարման շղթան և շարժվում դեպի Զեյթուն, իսկ մնացած մասը տեղավորվում է գյուղի մոտ, լեռների ծերպերում։ Դեպի Զեյթուն շարժվող բնակիչների վրա մի ձորում հարձակվում են թուրքական բանակի ուժերը և բաշիբոզուկները, որոնք սպանում են 600 երեխաներ, կանայք և աղջիկներ, իսկ 400 հոգու գերի են վերցնում։ Այդ ծանր օրը «շատ մը կիներ և օրիորդներ, չուզելով վավաշոտ գազաններու ձեռքն իյնալ, բարձր ժայռերու վրայեն ինքզինքնին վար նետելով անձնասպան եղան»[8]։ Մ. Ի. Յակիմանսկու տված մի զեկուցագրի համաձայն Ֆոնուզի շրջակայքում քարուքանդ եղավ 18 գյուղ, այրվեց 516 տուն և սպանվեցին մոտ 4000 քրիստոնյաներ։ Միայն բաշիբոզուկները իրենց հետ տարան հազար գեղեցիկ տղաներ և աղջիկներ, այդ պատճառով էլ, երբ սկսվեցին բանակցությունները Զեյթունում, լեռնականները թուրքական կառավարությունից պահանջում էին այդ արարքների համար պատժել գնդապետ Ալի Բեյին, սակայն Բ. Դուրը նրան տալիս է բրիգադային գեներալի կոչում[9]։

Ֆոնուզի անկումից հետո Ռեմզի փաշան դեկտեմբերի 14-ին սկսեց բանակը ավելի մոտեցնել Զեյթունին, որի բնակիչների թիվը հասել էր 25 հազար մարդու, որոնց և 600 թուրքական գերիներին նրանք պետք է կերակրեին։ Այդ ծանր վիճակի մասին նրանք հոկտեմբերի 27-ին գրեցին Մերսինի անգլիական հյուպատոսին և խնդրեցին իրենց հարցը բարձրացնել եվրոպական պետությունների առջև, գտնելով միաժամանակ, որ «այսուհետև մեր և թուրք կառավարության մեջ ինքնին միջամտություններ ընել, համաձայնիլ անկա-

---

7 Архив Внешней политики России (АВПР), ф. П-во в Константинополе, д. 1142, л. 45.

8 Մ. Վարժապետյան. Հուշիկք Զեյթունի. Մարզվան, 1912, էջ 170։ Սմբատ Բյուրատ. Զեյթունի վրեժը, էջ 532 և 535։

9 АВПР, ф. политархив, д. 229, л. 59

ռելի դարձած է, մեր բնակարանը, մեր վայրը պատերազմական ասպարեզ դարձած է»[10]։

Ռեմզի փաշայի բանակի առաջխաղացումը դեպի Զեյթուն ստիպեց լեռնականներին ավելի ուժեղացնել քաղաքի պաշտպանությունը։ Զինվեցին բոլոր զենքի ունակները։ Կանանց մի մասը զբաղված էր կովողներին մթերք, վառոդ հասցնելով։ «Զեյթունցիք սակայն խուճապի մեջ չէին, զի անմիջական վտանգ չկար, ոչ ալ զվարթ խանդավառության մեջ, որ տեղի կունենար, երբ վտանգը կանհետանա, այլ այն հանդիսավոր հուզումը, զոր մարդ կըզգա, երբ կը մեկնի դեպի մեծ անծանոթը»[11]։

1895 թ. դեկտեմբերի 15-ին տեղի ունեցավ թուրքական բանակի և ապրստամբների հանդիպումը Զեյթունից ոչ շատ հեռու գտնվող Սանտոխ կիրճում։ Ըստ իտալական հյուպատոս Հենրիկոս Վիթոյի գրքում բերված տվյալների այդ վայրում թուրքերը ունեին 20 հազար զինվոր, որի դիմաց կանգնած էին 5000 զեյթունցիներ։ Այդ ճակատամարտի ժամանակ թուրքական բանակը կռվի դաշտում թողեց 1000 դիակ[12]։

Ճակատամարտից առաջ լեռնականները երդվում են մինչև արյան վերջին կաթիլը կռվել թշնամու դեմ ու չնահանջել։ Նրանք այդ հարցը դնում են քվեարկության։ Այդ մասին «Զեյթունի պատմագրքում» կարդում ենք. «Ով որ մեր սիրելի Զեյթունի բարձր անվան և ով որ ազգին ու հայրենիքին սիրույն մեռնել կուզե, զենք թող վերցնե։ Ամենքն էլ առանց բացառության ձեռք վերցուցին»[13]։

Այդ ճակատամարտում լեռնականները զինված էին «Մարտին» տիպի, իսկ մի մասը՝ իրենց տեղական, կայծքարերով հրացաններով։ «Մարտին» տիպի հրացանները նրանց ձեռք էին բերել զորանոցը գրավելու ժամանակ։ Թուրքական բանակը չէր էլ մտածում, որ լեռնականները կդիմադրեն և հաղթական շարքերով առաջ է շարժվել, սակայն զինված զեյթունցիների կրակոցները նրանցից շատերին գետին են փռել։ Օգտագործելով իրենց ուժերի գերակշռությունը, թշնամին կարողանում է շրջապատել զեյթունցիների ջոկատը, որին, սակայն, հաջողվում է շատ քիչ զոհերի գնով ճեղքել թշնամու շրջթան, դուրս գալ պաշարումից և դիրքեր գրավել Փիսիր լեռան գագաթին և զորանոցում։ Շատ չանցած նրանք դուրս են գալիս զորանոցից և հարձակման են անցնում արշավող բանակի դեմ։ Թշնամին ետ է վանվում գրաված դիրքերից, թողնելով մի թնդանոթ և զգալի թվով սպանվածներ։

Այս օրերին թուրքական բանակի գերիները որոշում են հրդեհել քաղաքը և հեռանալ Զեյթունից։ Լեռնականների մարտիկները գտնվում էին կռվի վայրում և քաղաքում մնացել էին կանայք։ Նրանք սկզբից հրդեհում են կառավարչական տունը, տեսնելով այս, Զեյթունի կանայք զինվում են կացիններով, թրերով ու այլ իրերով և հարձակվում են քաղաքը հրդեհել ցանկացող թուրք զինվորների վրա։

Թուրքական բանակը Սանտոխի ճակատամարտից հետո շարունակում է իր արշավը դեպի Ֆոնուզ գյուղաքաղաքը։ Նրանք սկսում են հրանոթներից արկեր արձակել քաղաքի վրա։ Սակայն լեռնականների կանայք և երեխաները թաց շորերով փաթաթում էին չպայթած արկերը, ապա տուն տանելով զգուշությամբ հանում էին նրանց մեջ եղած կապարն ու վառոդը և օգտագործում։ Ֆոնուզի հետ հաշիվները մաքրելուց հետո Ալի բեյի բանակը ուղղություն է վերցնում դեպի Զեյթուն։ Լեռնականները ստիպված իրենց ուժերի մի մասը ուղարկում են նրա դեմ կռվելու։

Ռեմզի փաշան լեռնականներից պահանջում է անձնատուր լինել, սակայն նրանք դեկտեմբերի 22-ին հարձակվում են թուրքական ուժերի վրա

---

10 «Բանբեր Հայաստանի արխիվների», 1963, № 3, էջ 76։

11 Տ. Գևորգյան. Սանտոխ, մաս Բ, էջ 57։

12 Նույն տեղում, էջ 122—123։

13 Զեյթունի պատմագիրք, էջ 574։

և կոտորած սարքում, որից հետո գազազած հրամանատարը հարձակման հրաման է տալիս։ Զեյթունցիները ամրացել էին զորանոցում և գերլարված ուժերի գնով պաշտպանում էին այն։ Դեկտեմբերի 27-ին նրանք ստիպված այրում են զորանոցը և նահանջելով նոր դիրքեր գրավում քաղաքում։ Սակայն ձմեռը սկսվել էր և տավրոսյան լեռներից փչող ցուրտ քամին դժվարին դրության առաջ է կանգնեցնում կռվող կողմերին։ Թշնամու երկու բանակները նոր ուժեր են նետում մարտի և ցանկանում են օր առաջ գրավել Զեյթունը, բայց հաջողության չեն հասնում, քանի որ կռվի դուրս եկած զեյթունցիները որոշում են կռվել մինչև արյան վերջին կաթիլը։

Մեր ունեցած տվյալների համաձայն թուրքական բանակը կռիվներում և ցրտի պատճառով ունեցել է 20 հազար զոհ և դեկտեմբերի վերջին տասնօրյակում բարոյական տեսակետից գտնվել է շատ ծանր դրության մեջ։ Ուսումնասիրողները թուրքական բանակի թիվը հաշվում են ավելի շատ, քանի որ բանակին միացել էին Զեյթունի շրջակայքի Անտերունի, Կոկիսունի թուրք և չերքեզ բնակիչները, որոնց նպատակը Զեյթունը թալանելն էր։ Կառավարությունը ցանկացավ Զեյթունի դեմ ուղարկել Սուեսիայի լեռներում ապրող թաթերին, բայց նրանք չհամաձայնվեցին[14]։

Լեռնականների ապստամբության ժամանակ ոտքի ելան Դամասկոսի մոտ ապրող տյուրքինները, որոնք կռվեցին թուրքերի դեմ։ Թուրքական ուժերին հարկ եղավ շատ դժվարությունների գնով հպատակեցնել նրանց։ Այդ նույն ժամանակ էր, որ ապստամբեցին նաև մակեդոնացիները[15]։

1895 թ. հոկտեմբերի վերջին տասնօրյակում թուրքական բանակը սկսեց իր նոր հարձակումը Զեյթունի վրա։ Բանակի 18 հրանոթներից նրանք սկսում են անխնա գնդակոծել քաղաքը։ Սակայն լեռնականները դիմադրում են անասելի քաջությամբ։ Թուրքական կառավարությունը ստիպված ետ է կանչում Ռեմզի փաշային և նրա փոխարեն նշանակում է Էդհեմ փաշային։ Վերջինս ցանկանում է առաջին իսկ օրերին հաջողություն ձեռք բերել, սակայն ոչ մի արդյունքի չի հասնում։

1896 թ. հունվարին գյուղաքաղաքի դրությունը գնալով վատանում է։ Անընդհատ թնդանոթային ռմբակոծումները, պարենի պակասը, հիվանդությունները սոսկալի դրություն են ստեղծում Զեյթունում։ Չնայած դրան լեռնականները կռվում էին, և թուրքական բանակի հրամանատարությունը հույս չուներ գրավել գյուղաքաղաքը։ Իտալական հյուպատոս Հենրիկոս Վիթոն Զեյթունի այդ օրերի վիճակի մասին իր դեսպանին հեռագրել է. «Զեյթուն ապաստանած հազարավոր հայերի վիճակը սոսկալի է. աղքատության և հիվանդությունների պատճառով հարյուրավոր հիվանդներ, միմյանց վրա թափված, պառկած են մեռելների հետ միասին։ Կանայք և երեխաներ նույնիսկ ցնցոտիներ չունեն, որ ծածկեն իրենց մերկությունը։ Երկրից դուրս ուղարկվածների մեջ շատերն ուժասպառությունից մեռան։ Կառավարությունը անկարող է նրանց օգնել, և երկրի մեջ չկա ոչ ոք, որին կարելի լիներ դիմել և նպաստ խնդրել»[16]։

Նոր հրամանատար նշանակելուց հետո թուրքական կառավարությունը կարծում էր, որ բանակը մի քանի օրում կգրավի Զեյթունը, սակայն ապստամբները դիմադրում էին ավելի կատաղի կերպով։ Այս ի նկատի ունենալով Սուլթան Համիդը համաձայնվում է, որ օտարերկրյա 6 հյուպատոսները Զեյթուն մեկնեն և սկսեն հաշտության բանակցություններ ապստամբների և կառավարության միջև։ 1896 թ. հունվարին 6 տերությունների հյուպատոսներ՝ ռուսականը (Միխայիլ Իվանովիչ Յակիմանսկին), ֆրանսիականը (Պարթելմի), ավստրո-հունգարականը (Պարնենոր), գերմանականը (Զոլինգեր), անգլիականը (Պարնհայմը), իտալականը (Հինրիկոս Վիթո) ժամանում են

14 «Անահիտ», 1902, № 8, էջ 182։
15 Նույն տեղում, 1903, № 4, էջ 70։
16 «Մշակ», 1896, № 135։

Զեյթուն։ Սկսվում են բանակցությունները, որոնց զեյթունցիների կողմից մասնակցում են 12 հոգի։ Զեյթունից բանակցություններին մասնակցողները առաջարկում են Լիբանանի ձևով մի վարչություն ունենալ ինչպես Զեյթունի, այնպես էլ շրջակա գյուղերի համար։ Այս առաջարկությունը, սակայն, հենց սկզբից մերժվում է։

Մ. Ի. Յակիմանսկին Զեյթունի ավագանուն առաջարկում է պահանջել ռուսական հովանավորություն ընդունելու հարցը։ Լեռնականները նրան հարգանքի տոնով ասում են, որ իրենք շատ են սիրում ռուսական կառավարությանը, որի ջանքերով բալկանյան ժողովուրդները ազատվեցին օսմանյան անտանելի լծից և դարձան առանձին պետություններ, սակայն չեն կարող «առանց ընդհանուր հայ ազգի գիտակցության, վերջնական որոշում մը տալ»[17]։

Բանակցությունների ավարտից հետո կնքվեց 10 կետից բաղկացած մի պայմանագիր օսմանյան կառավարության ներկայացուցիչների և լեռնականների միջև, որի համաձայն ընդհանուր ներում էր շնորհվում բոլորին, այդ թվում հնչակյան 6 գործիչներին։ Վերջիններս Կոստանդնուպոլսի դեսպանների երաշխավորությամբ պետք է անվտանգ ուղարկվեին արտասահման։ Թուրքական կառավարությունը իր վրա է վերցնում զորանոցի վերաշինությունը։ Գրավված թնդանոթները և զենքերը պետք է վերադարձվեին։ Զեյթունի նոր կայմակամը պետք է լիներ քրիստոնյա, իսկ օգնականը՝ թուրք։

Զեյթունցիների և այնտեղ ապաստանած գավառակի գյուղերի բնակիչների նախկին հարկերը չեղյալ էին հայտարարվում և նրանք 3 տարով ազատվում էին հարկերից։ Զեյթունի ապաստամբած բոլոր հայ գյուղացիները ապահով պետք է վերադառնային իրենց գյուղերը։ Գյուղաքաղաքում մնալու էր մի վաշտ զորք, մնացածները 10 օրվա ընթացքում պետք է հեռանային այնտեղից։ Զեյթունում ոստիկաններ նշանակելիս պետք է նախապատվությունը տրվեր հայերին։ Եվ վերջապես, եվրոպական պետություններ Մարաշում պետք է ունենային իրենց ներկայացուցիչը, որը պետք է հետևեր կնքված պայմանագրի կենսագործմանը։ Այս պայմանագիրը հաստատվեց սուլթանի կողմից և դրանով վերջ տրվեց ահեղ պատերազմին։ Սակայն թուրքական կառավարությունը հենց սկզբից սկսեց չկատարել իր խոստումը Զեյթունում քրիստոնյա եպիսկոպոս նշանակելու մասին, որի կապակցությամբ 1896 թ. մայիսին Կ. Պոլսում մի քանի անգամ հավաքվում են 6 դեսպանները և առաջարկում Բ. Դռանը «Զեյթունում քրիստոնյա կայմակամ նշանակել»[18]։

Ժամանակի մամուլում հրապարակված հոդվածներից երևում է, որ սուլթանը չէր էլ մտածում այդ պայմանագրի կենսագործման մասին։ Այդ օրերին «Մշակը» որում էր. «Ամբողջ 6 ամիս ձգձգելուց հետո սուլթանը վերջապես համաձայնվեց Զեյթունում քրիստոնյա նահանգապետ նշանակել։ Այժմ հարց է ծագում, քանի՞ ամիս սրետք է սպասել, մինչև որ խոստացված քրիստոնյա նահանգապետը նշանակվի, քանի՞ ամիս պետք է սպասել, որ նա Կ. Պոլսից Զեյթուն անցնի և վերջապես քանի՞ օր նա պետք է մնա իր պաշտոնի մեջ»[19]։

Պայմանագիրը ստորագրելուց որոշ ժամանակ անց բոլոր հյուպատոսները մեկնում են Զեյթունից բացի իտալական հյուպատոս Հենրիկոս Վիթոյից (1830—1904), որը մի քանի ամիս մնում է այնտեղ, և ապա գրի է առնում այդ ժամանակաշրջանի բոլոր իրագարձությունները։ Նրան այդ գործում օգնում է Հ. Ահարոնյանը։ Եղած նյութերը հաճրնցի Հ. Քեչեչյանը թարգմանում է թուրքերենի և հանձնում հյուպատոսին։

Զեյթունից հեռանալուց հետո հյուպատոսը գրեց և 1897 թ. Ֆլորենցիայում Անատոլիո Լատինո ծածկամվամբ հրատարակեց «Հայերը և Զեյթունը»

---

17 Զեյթունի պատմագիրը, էջ 628։

18 «Մշակ», 1896, № 58։

19 Նույն տեղում, 1896, № 69։

(„Cli Armeni e Zeitun") 700 էջանոց, երկու մասից բաղկացած իր աշխատությունը, որի մի մասի թարգմանությունից երևում է, որ նա տարիներ շարունակ զբաղվել է հայոց պատմությամբ և նրա գրքի 400 էջը հայ ժողովրդի պատմությունն է սկսած Ուրարտուից մինչև XIX դարի երկրորդ քառորդը։ Գրքի տիտղոսաթերթի վրա գրված է, որ այն հանդիսանում է «մի կեղեքված ժողովրդի պատմությունն»։ Գրքում շարադրված է նաև Կիլիկիայի հայկական պետության պատմությունը։ Աշխատության երկրորդ մասը կոչվում է «Զեյթուն», որի մեջ կան շատ էջեր Այնթափի, Մարաշի և Զեյթունի մասին։ Կան վիճակագրական տվյալներ այդ վայրերի ազգային կազմի վերաբերյալ, կան Զեյթունի համայնապատկերի հիանալի նկարը, հնչակյան 4 ղեկավարների նկարները, մեծ քանակությամբ ժողովրդական երգեր և բանաստեղծություններ, որոնց թվում Պիրիտ լեռան մասին եղած տաղը, «Կեցցե Զեյթուն, ապրի Զեյթունն» երգը և այլն։

Պահպանված տեղեկությունների համաձայն Հենրիկոս Վիթոն գլխավորել է Զեյթունի հարցի մասին եղած նիստերը, որին մասնակցում էին 6 հյուպատոսները, Զեյթունի հայ ավագանու և թուրքերի ներկայացուցիչները։

Հենրիկոս Վիթոն երկար տարիներ ապրել է Հալեպում, շփվել է հայ լեռնականների հետ և ջերմ սիրով սիրել է նրանց։ Տեղեկություն ունենք նաև, որ հյուպատոսը «այդ պատմական օրերին իբրև հիշատակ գուրգուրանոք իր մոտ պահած է Զեյթունի զորանոցի վրա ծածանած ու թուրքական գնդակներեն ծակծկված հայկական դրոշակը, Աղասիի ձեռագիր նամակը և անոր կողմե թուրք զինվորներու տված ու հայերեն լեզվով գրված անցագիրներեն ոմանք և այլ թանկարժեք իրեր, որոնք հպարտությամբ ցույց տված է իր այցելողներուն»[20]։

Իր գրքում Հ. Վիթոն զեյթունցիների պայքարի մասին թողել է հետևյալ տողերը. «Ողջույն քեզ, Զեյթուն, դյուցազն քաղաք։ Որչափ արևը փայլի մարդկային դժբախտության վրա, քու անունդ պիտի ապրի իբրև խորհրդանշան տառապող ժողովուրդներու դարթումի շեփորը անոնց ապագա պատերազմիկներու, ի պաշտպանություն իրենց ընտանեկան սրբությանց»[21]։ Նա գրել է, որ ով չգիտե հայոց պատմությունը և չգիտե Հայկական հարցի մասին, չի կարող լրիվ ըմբռնել այդ հերոսական քաղաքի գործադրած ջանքերը։ Իր գիրքը գրելիս նա կարդացել է շատ հոդվածներ, որոնք տպագրված են եղել ժամանակի մամուլում, ուսումնասիրել է հայ ժողովրդի պատմությունը։ Ցավոք այս հիանալի գիրքը մինչև այսօր չի թարգմանված հայերեն, որի մեջ ազատության ջատագով հեղինակը դրվատանքի հիանալի խոսքեր է գրել օսմանյան տիրապետության տակ գտնվող ժողովուրդների, որոնց թվում նաև հայ ժողովրդի մասին։

Զեյթունի հարցով շատ ջանքեր է թափել Հալեպի ռուսական դեսպան Միխայիլ Իվանովիչ Յակիմանսկին, որը 1883 թ. մինչև 1888 թ. եղել էր Դիարբեքիրի, իսկ դրանից հետո, մինչև 1898 թ.՝ Հալեպի ռուսական կոնսուլը։ Այդ երկար ու ձիգ տարիների ընթացքում շատ մոտիկից շփվելով հայ ժողովրդի զանազան խավերի հետ, նա լավ գիտեր, թե ինչ ծանր վիճակում է գտնվում այդ ժողովուրդը օսմանյան բռնապետության մեջ։ Այդ մասին են վկայում նրա մի շարք զեկուցագրերը իր վերադասին, որոնք գտնվում են Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվում։ Կոստանդնուպոլսի դեսպանին ուղղված իր զեկուցագրերում նա բերում է մանրամասն տվյալներ Ուրֆայի, Այնթափի, Բիրեջիկի, Մարաշի և այլ վայրերի հայերի կոտորածի մասին։ Ըստ իր տվյալների 1895 թ. նոյեմբերի 15-ից 17-ը Ուրֆայում սպանվեցին և այրվեցին ավելի քան 10000 քրիստոնյաներ[22]։ Ըստ նրա

---

20 Զեյթունի պատմագիրք, էջ 795։

21 Տ. Գ ե ո ր գ յ ա ն. Սանտոխ, էջ 34։

22 АВПР, ф. П-во в Константинополе, д. 1142, л. 5.

մի զեկուցագրի հունվարի 14-ից 16-ը ընկած ժամանակամիջոցում Մ. Ի. Յակիմանսկին Մարաշից դնում է Զեյթուն։ Ամսի 16-ին նա Զեյթունում էր։ Այստեղ նա հանդիպում է շատերի, որոնց թվում նաև Աղասու հետ, որի մասին իր զեկուցագրերից մեկում գրում է։ «Աղասի—հայ, շիկահեր, արտաքինից բավական համակրելի, 25 տարեկան, պատանեկական ավյունով և էնտուզիազմով նվիրված է հայկական իդեալներին, Լոնդոնի «Հնչակ» կոմիտեի անդամ, քաջ, գերազանց հրաձիգ, զեյթունցիների մոտ կարողացել է իր նկատմամբ հավատարմություն ձեռք բերել, որպես հայրենասեր պատրաստ է մեռնել հայրենիքի պաշտպանության համար։ Եղել է Եվրոպայում, կարողանում է խոսել և գրել ֆրանսերեն և թուրքերեն»[23]։

Պայմանագիրը կնքելուց հետո թուրքական զորքերը, ինչպես նաև հյուպատոսները հեռացան Զեյթունից։

Մի քանի խոսք Հնչակյան կուսակցության կողմից 1895 թ. ապստամբությունը ղեկավարելու մասին։ Զեյթունի հնչակյան 6 գործիչները Աղասու գլխավորությամբ իրենց պրոպագանդայով արագացրին, կազմակերպված բնույթ տվեցին ինքնապաշտպանական կռիվներին։ Ի դեպ, Հնչակյան կուսակցության Լոնդոնի կոմիտեն Ավ. Նազարբեկի գլխավորությամբ կազմել էր մի ծրագիր, ըստ որի ապստամբությունը պետք է ընդգրկեր ոչ միայն Զեյթունը, այլ ամբողջ Կիլիկիան։ Այդ ծրագրի նպատակն էր ոտքի հանել Կիլիկիայի հայ բնակիչներին և ապա եվրոպական պետությունների և Ռուսաստանի առջև դնել Հայկական հարցը[24]։

Հետաքրքիր է նկատել, որ Աղասին Զեյթունի ապստամբությունը սկսելուց առաջ Արեգին գյուղի Մութ Ձորում տեղի ունեցած ժողովում Անգլիայի վարչապետ Գլադստոնի անունից խոստում է անում հավաքված զեյթունցիներին։ Նա հաստատապես պնդում է, որ ապստամբությունը սկսելուց հետո անգլիական նավերը կլինեն Մերսինում և այնտեղից «կը հսկեն որպեսզի Կիլիկիո հայությունը ազատ մնա կոտորածե»[25]։

Լեռնականներից Արթին աղան և նրա հետ շատերը բոլորովին չեն հավատացել, որ անգլիացիները խոստացել են իրենց օգնել։ Այդ կապակցությամբ Արթինը ասել է. «Կլաթստոնը պատվո խոսք տված է օգնելու, եթե իրականություն է, եթե անկեղծ է, Հայաստանի լեռներն ու ձորերը հայ արյունով ներկել թող չիտային, ինչպե՞ս կըլլա, որ անոնց չեն օգներ և մեզի օգնելու խոստում կընեն, անոնք Կիլիկիո հայությունն ալ պետք է փճացնեն, որ հալ ազգին Հայաստան մը ունենալու դատը թաղվի հայուն հետ, որպեսզի երբ օր մը Թուրքիո հողը բաժնելու ըլլան մեջներնին ուրիշ ժառանգորդ մը երևան չիգա»[26]։

Ճիշտ էր պարզամիտ և նահապետական լեռնցին։ Հայտնի է, որ զեյթունցիները մի քանի ամիս շարունակ կռվեցին թուրքական բանակների դեմ, սակայն եվրոպական ոչ մի պետությունից օգնություն չստացան։

---

23 Նույն տեղում, գ. 224, թ. 56։

24 Յ. Պ. Պողոսյան. Հաճընի ընդհանուր պատմությունը և շրջակա Գողանտացի հայ գյուղերը. Լոս Անճելես, Քալիֆորնիա, 1942, էջ 556։

25 Զեյթունի պատմագիրք, էջ 509։

26 Նույն տեղում, էջ 510։